



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, 13 Մարտը Մեծ Պահոց 2-րդ Կիրակին է, որ կը կոչուի՝ Արտաքսման Կիրակի:

Կիրակի, 13 Մարտին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT
ST. SARKIS CHURCH IN PASADENA**

Sunday, March 13th, 2011 is the second Sunday of Great Lent, which is known as Sunday of the Expulsion.

H.E. Archbishop Moushegh Mardirossian will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Sarkis Church in Pasadena.

**ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ
ՄԵԾ ՊԱՅՈՑ ԱՄԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ**

Չորեքշաբթի, 16 Մարտին, կ.ա. ժամը 10-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Արեւազալի ժամերգութեան:

Արարողութենէն ետք, Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին, տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կազմակերպած Մեծ Պահքի ճաշկերոյթը, որուն ընթացքին Տիար Կարօ Պետրոսեան պիտի խօսի Մեծ Պահքի մասին:

Առաջնորդ Սրբազանը պիտի փոխանցէ իր պատգամը:
Պիտի իրագործուի գեղարուեստական կոկիկ յայտագիր, պիտի
հրամցուին Պահքի յատուկ ճաշեր:

PRELACY LADIES AUXILIARY GREAT LENT LUNCHEON

On Wednesday, March 16th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Sunrise Services at St. Mary's Church in Glendale. The service begins at 10:00 a.m.

The Prelate will then preside over the annual Prelacy Ladies Auxiliary Great Lent Luncheon which will take place at "Armenak Der Bedrossian" Hall starting at 11:30 a.m.

During the luncheon, Mr. Garo Bedrosian will speak on Great Lent. A cultural program will also take place.

Donation is \$30 and tickets can be reserved by contacting the Prelacy.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ Ս. ՆԱՅԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ ՀԱՆԴԻՍԱԳԹԵՏԵՑ ԱՐԵՎԱԳԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ



Չորեքշաբթի, 9
Մարտին, Թեմիս
բարեխնամ Առաջնորդ
Բարձր. Տ. Մուշեղ Արք.
Մարտիրոսեան
հանդիսապետեց Էսսիւնոյի
Սրբոց Նահատակաց
Եկեղեցւոյ Արեւագալի
առաջին արարողութեան:
Սրբազան Հօր
աղօթակից էին Գերշ. Տ.
Եփրեմ Արք. Թապազեան
ու Թեմիս մէջ ծառայող
միաբան եւ քահանայ
հայրեր:

Ժամերգութեան ներկայ եղան Ֆերահեան Ազգ. Վարժարանի
բարձրագոյն կարգի աշակերտները եւ հաւատացեալներ:

Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան աշակերտներուն խօսեցաւ մեծ
պահոց մասին:

Արարողութենէն ետք, Եկեղեցւոյ կից «Տիգրանեան» սրահին մէջ,
տեղի ունեցաւ Էսսիւնոյի ՀՕՄ-ի «Անահիտ» մասնաճիւղի Մեծ Պահքի
ճաշկերոյթը, հիւրընկալութեամբ մասնաճիւղի երկարամեայ անդամներէն
Խաթուն Շաքարեանի:

Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց ճաշկերոյթին եւ փոխանցեց իր օրհնութեան խօսքը:

Մեծ Պահոց մասին խօսք առաւ Թեմիս Ա. Գրոց Սերտողութեան պատասխանատուներէն Գրիգոր եղբ. Մարլեան:

PRELATE PRESIDED OVER FIRST SUNRISE SERVICE AT HOLY MARTYRS CHURCH IN ENCINO



On Wednesday, March 9th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the first Sunrise Service of Great Lent at Holy Martyrs Church in Encino.

H.E. Archbishop Yeprem Tabakian, Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian, Parish Pastor Rev. Fr. Razmig Khatchadourian, and Pastor of Holy Cross Cathedral Rev. Fr. Ashod Kambourian participated in

the service.

Alongside the faithful in attendance were students of Ferrahian High School.

During the service, Fr. Muron spoke to the faithful about Great Lent.

The local ARS "Anahid" Chapter had organized a luncheon which followed the service and was held at the adjacent "Dikranian" Hall. The luncheon was hosted by long-time ARS member Mrs. Khatoun Shakarian.

The Prelate delivered his blessings and message on this occasion.

Mr. Krikor Misserlian, who heads Bible Studies at our parishes, spoke to the guests about Great Lent.

ԳԵՐՊ. Տ. ՄԻՒՌՆ Ծ. ՎՐԴ. ԱԶՆԻԿԵԱՆԻ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ ՅՈՒՍԵԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեանի, կազմակերպութեամբ Նորթ Հոլիվուտի Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ նախաձեռնութեամբ 30-ամեակի յանձնա-խումբին, Ուրբաթ, 4 Մարտ 2011ի երեկոյեան, Կլենտէյլի Ա.

Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ- հանդիսութիւն, նուիրուած եկեղեցւոյ Հոգեւոր Մատակարար Գերպ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեանի, անոր կուսակրօն քահանայ ձեռնադրութեան 30ամեակին առիթով: Ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Տիար Խաժակ Տիգիճեան, Թեմիս կրօնական եւ Ազգ. Վարչութեան անդամներ, ծխական եկեղեցիներու հոգաբարձութեանց ներկայացուցիչներ, երեսփոխան ներկայացուցիչներ, սարկաւազաց եւ դպրաց դասեր, Տիկնանց միութեանց ներկայացուցիչներ, երիտասարդական միութեանց անդամներ, դպրեվանքի սաներ, ինչպէս նաեւ միութենական ներկայացուցիչներ եւ շուրջ չորս հարիւր հաւատացեալներ:



Երեկոյթի հիւրընկալներն էին Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նունէ Սեփեթճեան բարերար ամուլը: Տիար Ս. Սեփեթճեան եղած է Դպրեվանքի սաներէն: Բարի գալուստի խօսք արտասանեց եւ հանդիսավարութիւնը կատարեց Տիկին Սօնա Մատարեան: Եկեղեցւոյ

հոգաբարձութեան խօսքը փոխանցեց հոգաբարձութեան ատենապետ Տիար Խաչիկ Թիթիգեան: Յանուն Կրօնական Ժողովին, խօսք առաւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան: Սրտի խօսք արտասանեց Ֆրեզլոյաբնակ բարեշնորհ Մարք Սարկաւազ Ծիրին: Ընթերցում մը կատարեց եկեղեցւոյ դպիրներէն Տիար Պաղտիկ Էքմէքճեան: Կիրակնօրեայ վարժարաններու Վարիչ Մարմինի խօսքը փոխանցեց Տիար Յակոբ Զաղացպանեան:

Ազգային Վարչութեան անունով շնորհաւորանքի ու գնահատանքի խօսք արտասանեց Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան:

Իրագործուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Կոմիտասէն կտոր մը մեներգեց Տիկին Էլենա Աւանեսեան: «Հայ Հերոսներ» կտորը արտասանեց Փոքրիկն Գեորգ Սկրտիչեան:

Երկու երգերով ելոյթ ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի «Լուսաւորիչ» Երիտասարդական երգչախումբը, ղեկավարութեամբ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի: Հայկական ժողովրդական եւ դասական երգերու շարք մը հրամցուց երգիչ Գագիկ Պատալեան:

Յուցադրուեցաւ տեսաերիզ մը, որ կը ներկայացնէր Գերպ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեանի կեանքն ու գործունէութիւնը: «Եկեղեցին Հայկական»ը ասմունքեց Տիկին Ռոզաննա Ուլիկեան:

Առաջնորդ Սրբազան Հայրը, երկար տարիներու միաբանակից եւ դպրեվանքեան օրերէն Հայր Սուրբը մօտէն ճանչցող, վկայակոչեց անոր հայ հոգեւորականի բարեմասնութիւնները, անձնդիր նուիրումը հայ եկեղեցական արժեքներուն, հաւատքի տոկունութիւնը, աշխատունակութիւնը եւ մանաւանդ լուռ եւ համբերատար

աշխատասիրութիւնը: Ապա Առաջնորդ Սրբազանը, առ ի գնահատանք Հայր Սուրբի երեսամեայ հոգեւոր ծառայութեան, անոր վիզէն ականակում լանջախաչ մը անցուց:



Խանդավառ մթնոլորտի մէջ բեմ հրաւիրուեցան հոգաբարձութեան ատենապետ Տիար Խաչիկ Թիթիգեան եւ երեկոյթին հիւրընկալ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Նունէ Սեփեթեան ամուլը, որպէսզի Հայր Սուրբին կողքին երեսամեակի կարկանդակը կտրեն:

Սրտի խօսքով հանդէս գալով՝ Հայր Միւռն, երախտագիտութիւն յայտնեց Թեմիս Բարեջան Առաջնորդին, յոբելենական խանդութեան իր հովանաւորութիւնը ընծայելուն, ինչպէս նաեւ անոր արտայայտած ազնիւ խօսքերուն եւ բարեմաղթութիւններուն համար: Շնորհակալութիւն յայտնեց Ազգ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Տիար Խաժակ Տիգիճեանին, Թեմիս Կրօնական եւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներուն, հիւրընկալ ամուլին, եկեղեցիներու հոգաբարձական, երեսփոխանական Տիկնանց, սարկաւազաց, դպրաց եւ ուսուցչաց կազմերուն, բարեկամներուն եւ հիւրերուն, եւ առհասարակ ներկայ բարեպաշտ ու հաւատաւոր բոլոր հայորդիներուն:

Հանդիսութիւնը հասաւ իր աւարտին «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» մաղթերգով:

RECEPTION HELD IN HONOR OF THE 30TH ANNIVERSARY OF THE ORDINATION OF VERY REV. FR. MURON AZNIKIAN



On Friday, March 4th, 2011, a dinner reception was held in honor of the 30th anniversary of the ordination of Very Rev. Fr. Muron Aznikian into the priesthood.

The reception was organized by the Board of Trustees of the North Hollywood Parish, where Fr. Muron serves as Pastor, and was held under the auspices

of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at the "Armenak Der Bedrossian" Hall of St. Mary's Church in Glendale.

Among the nearly four hundred guests in attendance were Central Executive member Mr. Khajag Dikjian, Religious and Executive Council members, Boards of Trustees members, delegates, deacons and altar servers, and Ladies Auxiliaries members from various parishes, youth groups' members, Seminary alumni, and members of sister organizations.

The evening was hosted by Seminary alumnus Mr. and Mrs. Sarkis and Nune Sepetjian.

The program began with welcoming remarks by Mrs. Sona Madarian, who also served as Master of Ceremonies.

Throughout the evening, congratulatory remarks and well wishes were delivered by the following: Mr. Khatchig Titizian, on behalf of the North Hollywood Parish Board of Trustees, Very Rev. Fr. Barthev Gulmian, on behalf of the Religious Council, Deacon Mark Shirin from Fresno, Mr. Hagop Tchagaspanian, on behalf of the Sunday Schools' Directorate, and Mrs. Rima Boghossian, on behalf of the Executive Council.

The cultural program featured a reading by Baghdig Ekmekjian, recitations by Kevork Megerdichian and Ruzanna Ooligian, and songs by Elena Avanesian, Gagik Badalian, and the "Lousavorich" youth choir led by Fr. Barthev.

There was also a video presentation recounting the life and service of Fr. Muron.

In his message, the Prelate recalled the days when he and Fr. Muron were both students at the Seminary and spoke of the staunch faith, selfless service and devotion to our faith and church, and hard work of Fr. Muron which he has witnessed having worked closely with him for many years. The Prelate then presented Fr. Muron with a pectoral cross in commendation of his 30 years of service.

After the Prelate's message, Board of Trustees Chair Mr. Khatchig Titizian and the hosts were invited to cut the 30th anniversary cake with Fr. Muron.

Fr. Muron was then invited to deliver his remarks. Fr. Muron expressed his gratitude to the Prelate for his kind words and well wishes, and his appreciation to all those who were present to celebrate this milestone.

The evening came to a close with the benediction by the Prelate, and the singing of the Cilician anthem.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՖՈՐԵՍԹ ԼՈՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Ուրբաթ, 4 Մարտի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը «Ֆորեսթ Լոն» հաստատութեան ներկայացուցիչներուն՝ Տեարք Տերին Տրեպիսկի (աւագ գործադիր տնօրէն), Աքաթ Տրուլէթի (աւագ փոխ նախագահ) եւ Տիկին Ուիլմա Ճոանիսի (Հոլիվուտ Հիլզի Ֆորեսթ Լոնի փոխ տնօրէն):

Հանդիպումին ներկայ եղաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան:

Ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանին որոշ տեղեկութիւններ տուին հաստատութեան աշխատանքներուն եւ ծրագիրներուն մասին, միաժանակ պատրաստակամութիւն յայտնելով իրենց ծառայութիւններուն ծիրին մէջ օգտակար ըլլալու հայ համայնքի զաւակներուն եւ այս ուղղութեամբ գործակցելու Ազգ. Առաջնորդարանին ու մեր եկեղեցիներուն հետ:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց հաստատութեան պատասխանատուներուն այս բարի տրամադրութիւնները եւ գոհունակութիւն յայտնեց գործակցութիւնը ընդարձակելու անոնց պատրաստակամութեան համար:

PRELATE WELCOMES REPRESENTATIVES OF FOREST LAWN MORTUARIES



On Friday, March 4th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from Forest Lawn Mortuaries Mr. Darin Drabing (Executive Vice-President), Mr. Scott Drolet (Senior Vice-President), and Mrs. Wilma Joanis (Vice-President of Hollywood Hills Forest Lawn). Rev. Fr. Vazken Atmajian participated in the meeting.

The representatives reported on the programs and services they provide, and also expressed their readiness to collaborate with the Prelacy and churches to assist the Armenian community.

The Prelate commended the representatives for their service, and expressed appreciation for their long-standing friendship, collaboration, and support of the Armenian community.
